Ուժի մեջ է 2019թ. հուլիսի 10-ից

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն

Հ. Անդրեասյան _____

8 հուլիսի 2019թ.

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից հաճախորդների հաշիվների բացման, սպասարկման, փակման, փոխանցումների իրականացման, գումարի կանխիկ տրամադրման, «ACBA ON-LINE» համակարգով ծառայությունների մատուցման, չեկային գրքույկների տրամադրման, անհատական պահատեղերում արժեքների պահատվության ծառայության, ինչպես նաև արժեթղթերի առքուվաճառքի և պահառության գործառնությունների և հաճախորդների ֆինանսական գործունեության հետ կապված այլ ծառայությունների դիմաց գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:

3. Սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

4. Հաճախորդի կողմից բանկային հաշվի պայմանագրի կամ որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի ստորագրումը հաստատում է Սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:

5. Սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով:

6. Առանձին դեպքերում, հաշվի առնելով հաճախորդի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, վարկային և/կամ ավանդային պատմությունը, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել Սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:

7. Մատուցված ծառայությունների համար Սակագներում նշված միջնորդավճարները Բանկի կողմից միակողմանիորեն (անակցեպտ) կարող են գանձվել հաճախորդի բանկային հաշվից, եթե այլ բան սահմանված չէ հաճախորդի հետ կնքված պայմանագրով:

8. Սույնով հայտնում ենք, որ Բանկի հանդեպ ընթացիկ հաշվի հետ կապված բոլոր պարտավորությունները Բանկի կողմից լրիվ կամ մասնակի կհաշվանցվեն Հաճախորդների Բանկում ունեցած բոլոր բանկային հաշիվներից:

9. Բանկը հաճախորդներին ծառայություններ է մատուցում և մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ է ընդունում գործառնական/աշխատանքային օրվա ընթացքում: Գործառնական/աշխատանքային օրը Բանկի մասնաճյուղերի համար սահմանվում է Երևանի ժամանակով ժամը 9:30-ից-16:30-ը, իսկ հեռահար սպասարկման, ներառյալ՝ ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի (այսուհետ՝ ՖԳԻԱՍ) համար՝ 9:00-ից 18:00-ն, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններում, պայմանագրերում կամ այլ ներքին իրավական ակտերում: Հեռահար սպասարկման, ներառյալ՝ ՖԳԻԱՍ-ների, միջոցով քարտային հաշվով գործարքների կատարման համար գործառնական/աշխատանքային օրը սահմանվում է 24 ժամ 7 օր, բացառությամբ՝ քարտին կցված վարկային գծի մարման գործարքի:

10. Կատարվող գործառնությունների նպատակն ու իրական շահառուներին պարզելու նպատակով Բանկն իրավունք ունի պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, պարզաբանումներ և նյութեր և կարող է կասեցնել գործառնությունները կամ հրաժարվել դրանք կատարելուց, եթե Բանկի կարծիքով գործարքների հիմնավորող բավարար ապացուցներ չեն ներկայացվում: Բանկը

կարող է սահմանափակումներ կիրառել նաև առանձին ծառայությունների գծով, օրինակ՝ փոխանցումների կատարման և/կամ փոխանցումների ստացման արգելք:

11.Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

12. Բանկի ներքին իրավական ակտերով և/կամ կոնտրագենտների և/կամ Բանկի հաճախորդների հետ կնքված պայմանագրերով որոշակի շրջանակի կամ առանձին ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց և/կամ անհատ ձեռնարկատերերի համար կարող են սահմանվել Սակագներից տարբերվող այլ սակագներ:

ԷՍՔՐՈՈՒ ՀԱՇԻՎՆԵՐ	
39. Էսքրոու հաշվի բացում և սպասարկում	
39.1. Էսքրոու հաշվի բացման միջնորդավճար՝ - մինչև 250 մլն ՀՀ դրամ	գործարքի գումարի 0.1%, նվազագույնը 30 000 ՀՀ դրամ
- 250 մլն ՀՀ դրամից ավելի	գործարքի գումարի 0.15%, առավելագույնը 500 000 ՀՀ դրամ
39.2. Էսքրոու հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%
* ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի հարցման միջնորդավճարը ենթակա է վճարման Վաճառողի կողմից:	